# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ Է ՏՎԵԼ ««ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.08.2018 17:18



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից 31.07.2018 թվականին ստացել է ««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության **օրենքի նախագիծը**, նախագծի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև Կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման հավելվածով նախատեսված տեղեկանքը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի հաշվառմամբ ««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը քննարկվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 11.08.2018 թվականի նիստում և արժանացել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի միաձայն հավանությանը (դրական կարծիքին):

Հատկանշական է, որ նշված նախագիծը լրամշակվել է նաև ՀՀ փաստաբանների պալատի առաջարկությունների հիման վրա, որոնք ձևավորվել են ակումբի նիստերի քննարկումների և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստերի նախկին քննարկումների արդյունքում:

**Բեռնել ՀՀ ՓՊ խորհրդի 11.08.2018թ. թիվ 16/12-1-Լ որոշումը**

**Բեռնել ««Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })